

ՎԱՐՈՒՄԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Պուշկարիոյ համար	12 Յր.
Տարեկան	6 "
Վերստահմանի	
համար տարեկան	15 "
կգաւ. սկայ	8 "

Վերստահմանի համար	3 Տր.
Տարեկան	1.50 "

Պատկերներու տպարան  
 Վերստահմանի համար 40 ս.  
 Վերստահմանի համար 20 ս.  
 Վերստահմանի համար 20 Օ/Յ զեղչ կըր

Վարձարկի համար ձեռքի 40 սանթիմ

# ՇԱՐՋՈՒՄ

## ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԻՏԵՄԲԵՐԻ ԶՈՐԵՔՆԱԹԻ ԵՒ ՀԱՐԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ ցրտի դիւր  
 Խմբագրութեան հաս-  
 ցելիս

Редакция на вѣтъникъ  
 „Шаржумъ“  
 Варна

Redaction du journal  
 „Charjourn“  
 Varna (Bulgarie)

Վերստահմանի համար  
 ձեռքի

( 20 ՍԵՆՏ. Մ )

Պուշկարիոյ համար  
 ձեռքի

( 15 ՍԱՆԹ. Մ )

Գրութեան եւ չեւ տրուի

ՀԱՐԱԹՈՒՄ Ի ԲԱՏԱՆՈՐԻ ԳՐԱԴԱՐԱՆԸ ԲԱՏԱՆԿԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԿԱՆՈՒԿ ՎՃԱՐԷ

### ՆՈՐ ՈՒՂՂՈՒԹԻՒՆԸ

Թարի հրամանով, զօրավար  
 կուրացատկին պարտաւորում է  
 յարձակողական զիջք բռնել  
 Ապագայի գործն է ցոյց տալ թէ՛  
 կուրացատկին և ուսուցանան զօր-  
 քը որքան յաջողութիւն կուսն-  
 նան այս նոր ուղղութեամբ:

Կուրացատկինի զօրքին ուղ-  
 զած ճառը որոշ կերպով ցոյց է  
 տալիս, որ նա նախ ուզում է  
 զօրքի առջեւ արգարանալ թէ՛  
 ինչի միջոցով հիմա շարունակ նա-  
 յանջում էր. և երկրորդ որ այս  
 ձգամ էլ յարձակողական զիջք  
 է բռնում, որովհետեւ Թարի  
 ցանկութիւնը այդպէս է:

Ճիշդ է, կուրացատկինը յայ  
 տարարում է որ հիմա ի, եւք զօ-  
 րուոր են, և Թարը վճռած է յաղ  
 թանակելու համար անհրաժեշտ  
 մեծ քանակութեամբ զօրքը գը-  
 նել իր տրամադրութեան տակ,  
 բայց չէ մոռանում նաեւ շեշտել  
 որ միայն քանակութեան առա-  
 նելութեամբ չէ կարելի յաղթել  
 քաղ թշնամուն:

Այս վարկեանիս 600 հազար  
 զօրքից կազմված երկու թշնամի  
 բանակներ զէմ գիմաց կանգ-  
 նած արդէն կուրի են բռնվել,  
 ինչպէս հազարաւոր են հեռագիր-  
 ները: Տեղի է ունենում պատ-  
 մութեան մէջ գեւ տեղի շունե-  
 ցած մեծ ճակատամարտ, որի  
 մէջ մեծ գեր պէտք է կատարեն  
 մարդ կոտորելու համար հնար-  
 ված պէսպէս զէնքերն ու գոր-  
 ծիքները որոնք քուէքստեների,  
 Այնքանոր Մակեդոնացիներ  
 և նոյն իսկ Նարոլէօններ ժա-  
 մանակ գոյութիւն չունէին և այ-  
 սոր իրանց գոյութեամբ պատե-  
 րաղբ աւելի սարսափելի. աւելի  
 արիւնտ են դարձնում:

Նա սարսափելին այն է որ այս  
 ճակատամարտն էլ վերջինը չը  
 պէտք է լինի: Ռուսական վիրա-  
 ւորված միապետութիւնը եթէ  
 յաղթական գուրս գոյ աւելի  
 կատարած պէտք է յառաջ խաղայ  
 սմբողջ Մանջուրիան ետ գրա-

ւելու համար, եթէ պարտվի,  
 պէտք է կրկին պատերազմը շա-  
 րունակէ իր ընկած վարկը գոնէ  
 մասամբ փրկելու համար:

Ու սուստղը պէտք է լինի  
 խեղճ ուս ժողովուրդը, որի աշ-  
 խատար ձեռքերը զոհ են գը-  
 նում ուս կայսերական վարկը  
 փրկելու և անշորք ու փառա-  
 սէր պաշտօնեաներին հոշակ ըս-  
 տեղծելու համար:

Ամեն մի բարեխիղճ և խելքը  
 գլխին ուս քաղաքացի զէմ է  
 պատերազմին, պատրաստ են  
 ձեռք քաշել Մանջուրիայի էլ,  
 Պորտ Ալեքսանդրի էլ, միայն ազատ-  
 վելու համար այն սարսափելի ա-  
 ներումից որ պատերազմը գոր-  
 ծում է ուս շարքերի մէջ. սա-  
 կայն պատերազմը շարունակվում  
 է, Շարունակվում է, որովհետեւ  
 պարտութիւնը ուս միապետու-  
 թեան անկում է գուշակում թէ  
 արտաքին աշխարհում, թէ բուն  
 երկրի մէջ: Իսկ այդ անկումը  
 վերջն է աւետում այն կարգե-  
 րի, որոնցով այսօր խեղդվում  
 է 140 միլիոն բնակչութիւնը:

Իսկ Ռուսաստանում կան շատ  
 շատերը, որոնք չեն ուզում վի-  
 րացած տեսնել երկրի վարչա-  
 կան ներկայ կարգերը, որովհե-  
 տեւ այդ միջնորդութիւնը կարող  
 են միայն ժողովրդի հաշուով,  
 ժողովրդի մէջքին նստած ալ-  
 րել:

ՎԱՐՊՕ

### ՎԱՆԻ ՇԱՐՋՈՒՄՆԵՐԸ

Վան 17/30 Օգոստոս 1904

Մեր ֆէտայիներու քանի մը  
 կարծուր ընդհարումներէ վերջ  
 որ տեղի ունեցան Մշոյ դաշտէն  
 մինչեւ Վասպուրական, Անգրա-  
 նիկը իշխան Գէորգ շափուշին և  
 Մուրատին հետ 70 մարդով եկան  
 Աղթամար:

Կառավարութիւնը տեղեկանա-  
 լով Անգրանիկի Աղթամար գալը,  
 կղզին կը շրջապատէ: Պաշարումը  
 տեւեց քանի մը օր, մինչեւ որ  
 կառավարութիւնը երկու զրահա-

ւորներով և քանի մը նաւերով  
 քանի մը հարիւր զինուորով ու  
 թնդանօթներով յառաջ խաղաց  
 գէպի կղզին և օդոստոս 24ի ա-  
 ռաւօ սեան սկսեց կղզին ուժակո-  
 ծել:

Անգրանիկը կը հրամայէ Աղ-  
 թամարի բորձրութեանց վրայ  
 ցցել կարմիր գրոշակ, որպէս զի  
 թշնամին հակնայ թէ ֆէտային  
 ալէկ գիտէ նաեւ կուրի թշնա-  
 մուն զրահաւորներուն գէմ, ինչ-  
 պէս կը կուր տնոր զօրքերուն  
 հետ ցամաքին վրայ, 2500 քայլ  
 տարածութեան վրայ մեր ֆէտա-  
 յիները զնդակներու տարափով  
 մը պատասխանեցին թշնամու  
 ուժակոծումին:

Թշնամին տեսնելով որ իր թն-  
 դանօթներովը նպատակին չի  
 հասնիր, կատկուրի ետ նահան-  
 ջել երկու մամ տեւող յարձակումէ  
 մը ետքը մտադրելով երկրորդ  
 անգամ աւելի պատրաստուած և  
 աւելի խիտ յարձակում մը գոր-  
 ծել:

Ճաշէն վերջ անոնք զրահաւոր-  
 ներուն վրայ կը շարժեն շատ մը  
 աւազով ի պարկեր և առնց ե-  
 տեւը ապաստանելով կսկսի նոր  
 ուժակոծումը:

Մեր ֆէտայիները կրկին թըշ-  
 նամին ետ կը մղեն: Այս անգամ  
 կուրը կը տեւէ մինչեւ երեկոյ:  
 Գիշերը վրայ հասնելուն պէս մե-  
 րոնք տեղաւորուելով փոքրիկ նա-  
 ւակներու մէջ ափ կելնան և ա-  
 պաստան կը գտնեն:

Մեր ֆէտայիներու թշնամուն  
 զէմ մղած այս կուրը փառա-  
 պանծ էր. յաղթութիւնը կատար-  
 եայ: Ամբողջ օրուան մը մարտին  
 մէջ մեղմէ սպաննուեցաւ միայն  
 տասներկու տարեկան պատանի մը  
 և ունեցանք երկու վիրաւորներ:  
 Թշնամին 18էն աւելի զոհ տուաւ.  
 արձակուած ումերբու թիւը 36  
 կամ 37 է:

Գէորգ շափուշը իր հրոսախըմ-  
 քով գնաց օւրիշ տեղ, իսկ Անգ-  
 րանիկը իր մարդոցը հետ միա-  
 սին վան կը գտնուի: Քաղաքին  
 մէջ ընդհարում մը անխուսափե-  
 լի կը համարուի:

Թիվիլգ 2: Սեպտ. 1904


Հայ լեզուաբաններու Աղ  
 թամար կղզիին մէջ գտնուելուն  
 լուրը անուելուն պէս թուրք  
 զօրքերը կը մօտենան կղզին շր-  
 շապատելու: Բայց թուրքին հայոց  
 գիբրերուն ուժակոծումը անօ-  
 գուտ կանցնի որովհետեւ թուր-  
 քերը ապստամբներու զնդակնե-  
 րուն տարափէն կատկուրին հե-  
 աանալ: Երկրորդ օրը ուժակո-  
 ծումը կը վերսկսի, այս անգամ  
 Ֆէրիկ փաշայն հրամանատարու-  
 թեամբ. բայց թուրքերը կրկին  
 ետ կը մղուին ու ապստամբները  
 գիշերը վրայ հասնելուն պէս նա-  
 ւակներով ինքզինքնին կը փրո-  
 կեն: Նոյն միջոցին թուրք սատի-  
 կանութիւնը, ապստամբներ փնտ-  
 րելու պատրուակով վանայ մէջ  
 հալածանք սկսած էր:

Հայոց թագին մէջ քանի մը  
 տներ հրգեհուած են և 25 հայ  
 սպաննուած: Հայ բնակչութիւնը  
 սարսափահար կատկուրի եւրո-  
 պական հիւպատոսարանները ա-  
 պաստանիլ, իսկ քաղաքին մէջ  
 սմէն ինչ կը գոցուէր:

Մուշի վիլայէթին մէջ և Սա-  
 սուն ոստիկանութիւնը, զէնք  
 փնտրելու պատրուակին տակ ամեն  
 տեսակ սարսափներ կատեղծէ և  
 վայրենի աւանջանքներ կը հնարէ:  
 Հայերու զինաթափումը շարա-  
 գում նշան մըն է: Յայտնի է լէ  
 այս մեծ կոտորածի մը նախեր-  
 գանքն է:

Կոտորածի վախը կածի մանա-  
 ւանդ եւրոպական հիւպատոսնե-  
 րուն անտարբերութեանը աւելի,  
 որոց բռնած գիրքը թուրքերը  
 կը քաջալերէ իրենց հայերու  
 գէմ պատրաստելի օճերին մէջ:  
 Այս էր պատճառը որ թուրք կա-  
 ռավարութիւնը, սկիզբները ար-  
 գիլիլով հիւպատոսներէն, վեր-  
 ջը կարողացաւ լրացնել Սասունի  
 զօրանոցներուն շինութիւնը:

(Բրո Արմենիա)



ՅԱՆՁՆԱԽՈՒՄԻՐԸ Ի ՆՊԱՍՏ  
ՀԱՅԵՐԱՆ

Սասունի և Մուշի վիսառած հայերուն օգնելու համար Բարի գի մէջ յանձնախումբ մը կայ մտած է հետեւեալ անձերէ. Պ. Պ. Պերթլո, Լափիս, Սիւլի Պրիւտ. հօմ, անդամներ ֆրանսական ա. կառնէրի. Միշէլ Պրէալ, Լէ-րոյի Պիւիօ, ճեմարանի անդամ- ներ. Ա. Պրիան, տրնի Կօչէն, տիւիտոնէլլ տը Գօնսթան, ժօ-րէս, արքա Լեմէր, Բրէսանտէ, Ռոանէ, Երեսփոխաններ. Վ. Պէ-րօր, Բ. Բիար:

Պ. Պ. Բրէսանտէ և Բիար ար- տաքին գործոց նախարարին ար- գէն յանձնած են 35, 166 քր. որ պիտի բաժնուի ֆրանսական Վանի փոխ հրապարտութիւնը և Նուէրները կրնան զրկուիլ Պ. Բիարի, փոխոց Եօլլէտ թիւ 10 Բարից:

Այս տարի մը այն հայերուն համար, որոնք միայն բարեգոր- ծութիւն ընել կը փափագին, կամ կուզեն փափագողներ ձեռնալ:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԲԻՒՐՈՆ

Յայնմ թերթը կիմանայ թէ խաղաղութեան միջազգային բիւ- րօն որ կը գտնուի Չուիցերիոյ Պերն քաղաքին մէջ, Պերլիի գաշնագրութիւնը ստորագրող պետութիւնները կը հրաւրէ ժողով մը, որ պիտի լսուի Ռուս և Աստրիական կառավարութեանց տեղեկագիրը իրենց մակեղոնա- կան գործերուն միջամտութեան արդիւնքներու մասին:

Մակեղոնական խնդիրը թող որոշուի խաղաղարար միջնորդ- գատարանով մը, իսկ հայկական խնդիրով թող զբաղի հրաժեշտով ժողովը:

Ի Ն Տ Ի Ն Ե Ր Ը (4)

(Պատկեր Բախտի կեանքի)

Մաղր տաքացաւ. բանկի գումարը հասաւ 1200 թ. Իւլիա Իվանովնան մի քիչ կը քրտամ յայտարարեց:

— Բանկը զեռ երեքկնած չէ, պէտք է խել, անսենք, ո՞վ է այն քաջը որ պէտք է խել այդ բանկը. ես չեմ ուզում որ Բարութիւնը մարսի, Թղթերը բաժանիր, Բարութիւնը, ես համոզված եմ որ այդ բանկը քեզ չի մնայ:

— Կարող է չը մնայ, Իւլիա Իվա- նովնա, բայց բաւական է որ ձեր թողութիւնը խփեցի. բաւական է որ դուք յաղթված էք. համոզված եմ որ դուք այլեւս իմ բանկի վրա աչք չէք ունենայ. ուրիշ կառնի այդ ոչ- ինչ. ես չեմ ուզում ձեզից յաղթված լինել, սկսում եմ թղթերը բաժանել լաւ մտածեցէք և ապա ոխկ արեք:

— Չէ, չէ, թղթերը փոխեցէք, բոլորովին նոր թղթեր վերցրէք. այդպիսի մի խոշոր բանկը չէ կարելի նոյն թղթով շարունակել, ընդմիջեց

ՆԱՍՏԱԿ ԵՐԿՐԷՆ

Սիրելի ձեր կըրոր ողորդ իմ

Պաշկարիս

Ստացայ ձեր նամակը ընդ նմին և Չ օսմանեան ոսկի, զոր այս ինչ ան- ձի միջոցաւ զրկած էիք ինձ: Բայց սիրելիս այդ երկու ոսկով ի՞նչ անեմ և ի՞նչպէս կառավարեմ ձեր բազմա- կարօտ ընտանիքը, ձեր տղուդ ճեթը, որոնք պող թոնրին շուրթը նստած հայ կաղաղակեն, Արդէն տաւարէ, ոչխարէ զրկուած ենք. լուծք չու- նինք. արտ մը ձմերուկ ցանկի տուի այն ալ թուրք զօրքեր աւարի տը ուրն այսպէս է և Մշոյ դաշտի և շը- ջակայ հայոց գիւղերու վիճակը:

Ի պրահիմ էֆէնտին ձեր գիւղի բո- լոր արօտանդիները և աղէկ արտերը գրաւեց, և ձեր վրայ սովակալի բըս նութիւններ կընէ. շատ անգամ Մուշ կերթայ և հօգար տեսակ զրպարտու- թիւններ կը յօրինէ թէ Բիար քի- ղի հայերը բոլորն ալ Ֆէտայի դար- ձած են, այս կերպով միշտ կըսպառ- նայ մեզ: Գարնան երբ թուրքի ան- համար զօրքեր Սասունը պաշարելու գնացին, վաշտ մը զօրք ալ եկաւ պաշարեց Տէրգեւանք գիւղը որու վը- բայ մեծ կասկած ունէր կատարու- թիւնը. մենք անոնց օգնութեան գա- ցինք և կուր եկաւ մեր ու զօրքերուն մէջ, Տէրգեւանք գիւղէն սպանուե- ցան շորս երիտասարդ մեր գիւղէն ալ սպանուեցան, կուրու Պառօն, կոպէ Մըօն և Սրգէ Գրօն. իսկ զօր- քերէն սպանուեցաւ 7 հոգի և մէկ ալ վիրաւոր. բայց այն ժամանակ՝ դրուժիւնը շատ մասհազ և վտանգա- լոր ըլլալով կառավարութեան հա- մար Չ ժամէն վերջ զօրքերը հետա- ցան և Հաւատարմի գիւղի վրայն ան- ցան դէպի Սասնոյ լեռները, Մեր ցոյց տուած դիմադրութիւնը մեծ ցաւ պատճառեց կառավարութեան և օրէ օր կը մտածէր իւր ուզած շարի- քը հասցնել մեզ, և ահա առիթը գը- տաւ. Օգոստոսի 25-ին երբ Մանուկի Ոսկիանը իմակ գաշտիկը գացած էր իւր գործով, մեր գիւղի Ի պրահիմ էֆէնտին լամուկ Ուսուֆը կոտորելով ետեւէն կերթայ. կը հասնի Ոսկիա- նին, ինչու եկար հոս, մեր արօտա-

տեղին է կըսէ և իսկոյն հրացանով կըսպաննէ զայն և շտակ քաղաքը կերթայ ու կըսէ թէ հայ ֆէտայինե- րով լեցուած է մեր գիւղը, մենք հասկանալով գիւղովին Տէրգեւանքը սպաստանեցանք որ զիրար պաշտպա- նենք գալիք բռնութեանց դէմ, կէս օրին էր. ալայի պէյը զօրքերով և կաւ. հասկցաւ որ մենք Տէրգեւանք գիւղը ապաստանած ենք. կանգ առաւ և պաշարեց զայն. հրամայեց անձ նստուր լինել մենք և Տէրգեւանք գիւղի երիտասարդներ միաձայնու- թեամբ շնորհակալ յայն հրամանը՝ նախ մենք երկարացուցինք մեր հրացաննե- լը դէպի զօրքերին, բայց այս ան- գամ աւելի անվախ և վճռականօրէն՝ կուր շատ անհամեմատ էր. Տէրգե- վանք գիւղէն սպանուեցան 12 երի- տասարդ որոց անունները ճշգրտէն չը գիտնալուս համար ժամանակ չկայ յի- չել սակայն մեր գիւղէն սպանուե- ցան Գուրու Միւիկ, Մուրատի Օհան, Փրոնօ Մուօն և Կիկէն վարպետի ի- գերն ալ վիրաւորուեցաւ Չօրքերը գարձեալ ձգեցին քաղաքեան քաղա- քը երբ իրկուրը վրայ հասաւ. Սի- բիլիս, ահա այս է մեր ներկայ վի- ճակը. ալ դուք մտածեցէք. իրաւ է թէ միւրթարուելու կէտ մը ունինք, այն է Անդրանիկ բէլը, երբեմն ինք և շատ անգամ ալ իւր ընկերները գիւղեր պտտելով կը գտնուին գեմզ, սակայն ասոր ալ օգնութիւն ընելու համար ամբողջ հայութեան խցին և ազգասիրութեան կը ձգեք: կը վեր- ջացնեմ գրութիւնս: Աստուած սի- րէք չմոռնաք զմեզ:

Մնամ քո Մշոյ Արհէնկարիս գիւղացի

Յ. Գ. Մշոյ Արաքս և Տէրգեւանք գիւղերու մէջ վերջերս պատահած դէպքերի մասին ձեզ զրկուած տեղե- կազիր փոստ ձգած պահուս. կրկին այսօր երկրէն եկաւ սուրհանգալը որ բերեց հետեւեալ տեղեկութիւններն ալ: Ստաղիւղի Տէր Մանուէլ քահանայ Պտկեան Եմչակ գիւղը թեմելու գա- ցած ատեն, կէս ճամբան կըսպանուի Պայաքցի քերթ մարի մէթոթ թեմա- ղորութեամբ: Նոյն գիւղի Տէր Մարգար քահա- նան Յ երիտասարդի հետ մէկտեղ ձեր-

բակ-սուեցաւ իրբեւ յեղափոխական, Սօկաք գիւղի 40 բանտարկեալնե- լը Բաղէ փոխադրուեցան բարձրա- գոյն հրամանի մը համաձայն:

ՄԻՆՁԵՆ ԵՐԿՐ

(— 0 —)

(Շար. 642 թիւէն ևւ վերջ)

Փողովուրդը կամ Սասուն բանկէն կոտորուելուն հոգը չէր. որ գիրեկ կը մէք այդպէս բնել, ոչ, հազար անգամ ոչ, այլ իրենց փորոն ցաղ- եւ կուսակցական կիրքն աւատու- թիւնը. եթէ իրենց փորոն ցաղ չէր, ինչու եւ ի՞նչ բանի համար չը ջանացին ու եւ կերպով օգնել Սա- սունին, Սասունը սակից երկք տա- րի առաջ էր որ այդ փոթորիկը պի- տի անցնէր իր գլխուն, եւ այն ա- սեն երբ Դաշնակցութեան Ամերիկա- յի կեդրոնական կոմիտէն պաշտօնա- պէս առաջարկեց իրենց, եւ պարզեց Սասնոյ վիճակը (իրենք ալ արդէն գիտին թէ Սասնոյ վիճակը կրկու- քական է եւ ամէն ատեն կոտորածի վտի կայ) որպէսզի համերաշխարար օգնեն, ի՞նչու իրենք բացարձակա- պէս խոյս տուին եւ չը յօժարեցան օգնել. եթէ իրենք անկեղծօրէն Սա- սունը կը հոգային ինչու խոյս տը- ուին, եւ չօգնեցին, ու այսօր եկա- ծին կուրան ու կողմաւ եւ գերադ- րականօրէն կոտան, ի՞նչու, ի՞նչու համար իրենց հաւարած հազարաւոր տղարներէն գոնէ սէնթ մը, միայն մէկ սէնթ մը չի յատկացուցին Սա- սունը զինելու գործին. եւ ամէն ստոր միջոց իգործ գրին որ արիչ օգնողներուն ալ պատճառ գտնան որ չօգնեն: Աւ դեռ ասանք են որ ե- լած են դաշնակցականները ազգա- սպաններս կոչելու ու մեր գլխուն գայլի աւետարան կարդալու: Ոչ- իրենք Սասունը չէին հոգար եւ չեն ալ հոգար, այլ կը հոգան իրենց ա- թոնները եւ որովայն. տարիներէ ի վեր է ի՞նչ եղած է իրենց գործը, կեդրոն քակը-լինել, Լաստօնէն Ե- րկպտոս եւ Եգիպտոսէն Պօսղոն կեդ- րոն փոխադրել, մարդիկ գրին, որ եղալարասպանութեան ոճի գործեն:

ասեց հիւրերից մէկը:

— Այո, այո, կրկնեց Իւլիա Իվա- նովնան, եթէ Սեթրակովը այստեղ լինէր Բարութիւնը չէր մարտեցնի... Իւլիա Իվանովնան գետ իւր խոսքը չէր վերջացրել երբ գուր բացեց, ու ներս մտաւ մի քարձարհասակ, թաւոտ սեւ յօնքերով, շեգրի գան- գուր մագերով, գուտ հայկական դէ- քով երկասարգ. 30ից մի քիչ անց ու թղթով զրազվածներին ուղղեց:

— Էհ, գուք ինձ էիք յիշում, ես էլ լաւ ժամանակին եկայ կարծեմ:

— Սեթրակովը, Սեթրակովը, մի- արեան գոչեցին ամենքը: Իւլիա Իվանովնան ուրախութիւ- նից վեր ցատկեց. ու առաջ վագե- լով, առանց Սեթրակովին ժամանակ տալու որ ուրիշներ ձեռքերը թոթ- վէ. նրա ձեռքից բռնելով բերեց խա- ղի սեղանի առջեւ և բանկը ցոթ տալով, ասեց:

— Այո, շատ լաւ ժամանակին վը- րա հասար. տեսնու՞մ ես Բարութիւնը ինչ է արել մեզ, աւելի ինձ: Մենք ասու՞մ էինք որ եթէ դու այստեղ լինեւ, այդ բանկը կը խլես. նրա- նու՞մ ել եք հազար բուրի էլ չըկալ:

Իւլիա Իվանովնան:

— Կր փոխեմ, համեցէք, նոր թղթ- թերթ ձեզ համար նոյնքան ձախող պէտք է լինեն: Ասում եմ որ այսօր իմ բախտի օրն է, մարդ չէ կարող գիմանալ ինձ:

Բարութիւնը վերցրեց խաղաթղթե- րի նոր ծրարը, ճարպիկութեամբ ևւ աղմուկով բացեց ու Իւլիա Իվանով- նային առաջարկեց կիսելու. Ժպտա- լով աւելացնելով:

— Եթէ կարող էք, կախարհեցէք, եթէ ոչ երբեք անգամից աւելի խոշոր գումար կը հաւաքեմ, ճիշդ եմ ասում: Իմ նախազգացումը ինձ երբէք չէ խաբել:

Թղթերը արդէն բաժանված էին, ինչպէսզի յատուրը իրենց թղթ- թերթ վար էին զրել, եւ դիտում է- ին Բարութիւնը. Սարգիսովը իր թղթերը երկար տնտղելուց յետոյ ցոյց տեց Իւլիա Իվանովնային մի- անգամայն յայտնելով որ ուզում է ամբողջ բանկը գնալ:

— Յոյս այս թղթի վրա է. թէեւ միւս երկուսը սրանից աւելի մեծ են ասեց նա, ինչ լինում է թող լինի, Իւլիա Իվանովնա:

— Լաւ թղթեր են. բայց դուք գի- տէք, Սարգիսով, գու՞մարը բաւա- կան խոշոր է:

— Ձեր բախտին, Իւլիա Իվանով- նա, առարկեց Սարգիսովը, Ահա այս թղթի գիմաց թուղթ բայց Բա- րութիւնը:

Այս խոսքերի հետ նա սկզանի վը- րա նետեց կրամիտի աղջիկու Բարու- թովը թուղթը բացեց, կրկին ագ- ոտել, կարծես աւելի սեւացած, ա- սուն էր:

— Այո, ճշգրտ Իւլիա Իվանովնան, այդ սարսափելի է, Բարութիւնը այ- սօր անտանելի է. գրա հետ չէ կա- բելի խաղալ:

— Էհ, ինչ էք ասում Իւլիա Իվա- նովնա. աղջիկները ո՞ւմ են յաջո- ղու՞թիւն բերել, որ Սարգիսովին քե- րեն: Ես երբ իմ թղթերի մէջ աղ- ջիկ եմ ունենում, թէկու՞զ միւսները ասուներ լինեն, բոլորովին չեմ խա- ղում:

— Այն հիւս պէտք է Սեթրակովը այստեղ լինէր, որ համ ունենայ. նա սիրում էր այս տեսակ խոշոր բան- կերի վրա յարձակում գործել, Մեր մէջ նրա չափ ոխկով տղայ չը կայ:

եւ թերթեր հրատարակել . տարին եւ ի վեր է հազարաւոր սուրբ կր հանգանակեն . զազոտի գործիչու եւ ընդհանուր ապստամբութեամբ մը կոռուելու պատրուակին տակ . ո՛րք են, ո՛րք գնացին այդ գրամները . ո՛րք են իրենց խումբերը եւ գունդերը ո՛րքնք պիտի կրնան ընդհանուր ապստամբութեան յառաջ բերել եթէ ուրիշ ալ ինչու կը պատահեն եւ երեւան չեն նստեր , չէ որ ամբողջ Հայաստանը արեւելի ծով դարձած է այսօր , թող հրամաններու հանուն , որ մեծ ալ տեսնենք եւ ոչ միայն ուրախանանք ու օգնենք իրենց աւելի մեծցնելու համար , այլ իրենց ճակատն ալ համարենք , բայց ինչ է որ կրնայ , խո՛ւմը եւ կամ գո՛ւնդ , յեղափոխութեան ծագողներուն քով միմէ յիմարու ի՛նչն չէ՞ ատենք ըստպատելու ատենցով :

Դաշնակցութեան իր ուժերը ներքին չարիքով միայն զայնուամ է եւ կաշխատի օգնել երկրի մէջ կռուուող հայ ֆէտայիին , եւ եթէ անիկայ այսօր չէ ետրուագած երկրի բոլոր պահանջներուն գոհացում տալ , յանցանքը անոր չէ , այլ անոնցը , որոնք մինչեւ այսօր խուլ կը մնան եւ չեն ուզեր լսել Հայաստանէն եկող ազնկատուր ձայները , եթէ լսեն ալ իրենց ակնկար մեղարմում կը խոթեն չը լսելու , եւ ամօր ու նախատինք իրենց որ հասարակին եւ չօգնեցին :

Հակառակ իրենց բոլոր թրջական վայրցներուն եւ սպառնալիքներուն Դաշնակցութիւնը եւ մասնաւորապէս երկրի յեղափոխականը կը մը նայ անընկճելի իր դիրքին ինչ , եւ հայ ժողովրդի գիտակից ու պարտաւանջ մասը այսօր ճանչցած են իրենց ցաւերուն դարման տանելու որդ կուսակցութիւնը եւ սկսած են իրենց պարտախնուութեան որոշ ուղիին մէջ մտնել , ու նէշուէն իմ կարծիքով Ամերիկայի մէջ առաջնակարգ տեղը կը գրաւէ այդ մասին :

Բայց մինչեւ ե՛րբ ջրհեղեղ գեռ պիտի շարունակեն իրենց յիմարութեանը եւ խաղաղութեանը , մինչեւ ե՛րբ պիտի շարունակեն թրջական վայրցները եւ լրբութիւնները , մինչեւ ե՛րբ պիտի շարունակեն իրենց էնտրիքները եւ խաբէրայութիւնները :

ներք , մինչեւ ե՛րբ պիտի շարունակեն իրենց շահագործութիւնները , եւ խաղաղութեանը մինչեւ ե՛րբ իրենց յեղափոխութեան անվայել լեզու գործածել պիտի շարունակեն , մինչեւ ե՛րբ պիտի շարունակեն հարուածել . եւ ամէն նախատինքներ թափել Դաշնակցութեան հասցէին եւ ժողովուրդը անոր դէմ գինել , մինչեւ այժմ չը հա՛սկցան ի՛նչ իրենց այդ բոլոր ջանքերը ապարդիւն են կասեցնելու համար յեղափոխական գործը , մինչեւ այսօր դեռ չը հասկցան թէ Դաշնակցութեան դէմ դաւաճողական փորձեր ընելով չեն կարող զանիկայ իր բարձր դիրքէն վար գլտորել . վերջապէս մինչեւ ե՛րբ իրենք այդպէս խելակորոյս եւ ճղակտոր պիտի ըլլան ճշմարտութեանը քօղարկելու համար , դեռ չը հասկրցան որ ճշմարտութեանը ատենց իրենց ալ ճշմարտութեան է , Մինչեւ ե՛րբ :

Երուսաղիմ-Նաթոս  
23 սեպտ. 1904  
Նէշուէ

**ՔՈՒՐՈՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԿՈՉԻ ԶՈՐՔԻՆ**

Նստի քան նոր յարձակողական դիրք բռնելու Գուրբաթի ճեմարանէ կոչը ուղղած է զօրքին .

«Նօթ տմիս է որ թշնամին դաւանորէն յարձակեցաւ մեզ վրայ Բօթի Արթուրի քով , նստի քան պատերազմ հրատարակելը . այդ ատենէն սուս գորքերը թէ ծովուն եւ թէ ցամաքին վրայ մեծ քաջագործութիւններ ըրին , որոնցով արդարացի կերպով պարծնուալ կրնայ մեր հայրենիքը : Այսու հանդերձ թշնամին ոչ միայն գեռ պարտուած չէ , այլեւ մեծամտութեամբ կերպով վերջնապէս յաղթել : Մանջութեան զօրքերը թէեւ դաւանական զօրաւոր , բայց այնքան ուժեղ չէին որ կարենային թշնամին վերջնապէս յաղթել , ժամանակի պէտքը կար որ այդ բոլոր զօրաւորութիւնները վերնային եւ մեր զօրքը ուժեղնայայն չարիքով , որ կարենար յաջողութեամբ լուծել իրեն առջեւ դրուած ծանր բայց փառաւոր խնդիրը , ու

այդ պատճառով էր որ հակառակ անոր որ մենք եւս միեւնոյք ճարտական յարձակումները մեր դիրքերուն դէմ , Թաշխաւի , Լիւնասիւնի եւ Լեւոսեանիէ քով . եւ ժամանակը չը համարեցի որոտիլ այդ յաջողութիւններով եւ յարձակողական դիրք բռնել : այլ հրամայեցի եւս նահանջել :

Դուք ձեր քաջարար պաշտպանած դիրքերը թողուցիք . առանց թշնամիէն անհանդատանալու եւ քաջութեամբ պատրաստ ընդ մարտերու համար :

Լեւոսեանի քով 5 օր պատերազմելէն , առջի եւ գլխաւոր դիրքերը յաջողութեամբ պաշտպանելէն յետոյ դուք նահանջեցիք դէպի Մուկաթն : Ամէն սպառնալիքներու մէջ , Գուրբաթի դիրքերուն յարձակումին ենթակայ . դուք անպարզ գրեթէ անանցանելի ճանապարհը ցերեկը կուր մղելով , իսկ գիշերը օգնելով թողանալով ներքին սայլերը տանելու , եւ առանց ատենցմէ մին կորցնելու , առանց գերի մը տալու եւ վիրաւորեալները թողուլու եւ առանց կարաւանին վնաս մը պատճառելու տալու :

Վիշուր սրտիս մէջ , բայց անդրդուելիօրէն հրամայեցի ձեզի նահանջել , որը թշնամին վճռողական յաղթելու համար անհրաժեշտ էր , մինչ յարմար վայրկեանը գայ :

Թշնամուն դէմ կուռելու համար մարը նշանակելու է մեծ քանակութեամբ զօրք , յաղթութիւնը ապահովելու համար : Յաղթուած են բոլոր զօրաւորութիւնները որոնք կարգիւն 10000 վերստ զօրք դրկել . եւ այդ ամէնը ձեռք բերուած է անդրդուելի եռանդով , հիմնուած սուս մարտի տալանդի վրայ , որոնց յանձնուած էր պատերազմական պատմութեան մէջ չը տեսնուած զօրաւորին զորքեր :

Հարկու հազարներով մարդիկ , առանձնակ հազարներով սայլեր , միլիոնաւոր փութերով նիւթեր 7 ամսուան ընթացքին մէջ եւրոպական Ռուսիայէն եւ Սիբիրէն զգուհեցան Մանջութիւն եւ իմէ արդէն հասած զօրաւորները գեռ չը բաւեն նորերը պիտի հասնին , որովհետեւ , Յարին անդրդուելի ցանկութիւնը որ մենք յաղթեցինք թշնամին , պիտի կատարուի :

Մինչեւ հիմայ թշնամին յայս դրեւելով իր մեծ քանակութեան վրայ եւ մեր զօրքերուն ետեւը անցնելով իր ուզածին համառտ յարձակման յարմար վայրկեաններ կրնարէր : Բայց հիմա հասաւ վաղուց ի վեր մեր զօրքին բաղձալի վայրկեանը . մենք է որ պիտի երթանք թշնամուն դէմ , մեզի յարմար վայրկեանին ճարտանցիները ստիպել որ անոնք մեր կամքը կատարեն :

Որովհետեւ մեր Մանջութիւնական ուժերը կը բաւեն յարձակողական քրքր բռնելու համար , Դուք պիտի անդադար առջի առջեւ ունենաք որ թիւի գերազանցութեամբ դու չի բաւեր քաջ հակառակորդը յաղթելու համար , այլ եւ ան , որովհետեւ որոշում յաղթելու ամեն դժուարութիւնները սկսած ամենափոքրէն մինչեւ ամենամեծը , ինչ զօհողութիւն ալ որ ընէք , գիտակցութեամբ ունենցէք թէ Ռուսիոյ համար յաղթելը ռափ կարեւոր է : Մտածեցէք թէ որչափ անհրաժեշտ է որ ազատենք Բօթի Արթուրի մեր եղբայրները , որոնք միայն իրով կը պաշտպանեն իրենց յանձնուած ամբողջութիւնը :

Ձիներներ , մեր զօրքը ուժեղ , ծարին եւ ամբողջ Ռուսիոյ միաձայնութեամբ մեր ամէն պատերազմներու մէջ հերոսական գործեր կատարել է հայրենիքին համար եւ ամէն ժողովուրդներու մէջ արդարացի փառք մը վաստկած է :

Ամէն ժամ մտածեցէք որ սուսական ամբողջ զօրքի պատիւն ու փառքին պաշտպանութիւնը ձեզի յանձնուած է :

Ռուս թագաւորութեան ազնիւ առաջնորդը , ամբողջ Ռուսիոյ հետ միասին ձեզի համար կազօթէ եւ զձեզ կօրհնէ :

Այդ ազօթքներով ամբացած նոր հերոսութիւններու համար , գիտակցող ձեր առջեւ դրուած խնդրին կարեւորութիւնը , պէտք է որ մենք առանց վախի , մեծ վճռողականութեամբ յառաջ երթանք մինչեւ վերջը մեր պարտականութիւնը կատարելու , առանց մեր կեանքը խնայելու :

Աստու կամքը ձեր ամենուն հետ ըլլայ :

բոլորս էլ այսպէս էինք հաւատացած մանաւանդ ես : Դէ , ապացուցիր որ մենք սխալված չէինք քո վերաբերմամբ :

— Բայց ներողութիւն , իւրիա ի . վանդաւ , ես այլեւս թուզի չեմ խաղաղ , ձեռք եմ քաշել : Վաղը բոլորովին հեռանում եմ Բաքուից : Ես միայն եկայ ձեզ բոլորիդ իմ վերջին հրաժեշտը տալու :

— Հրաժեշտ տուած միջոցին մեզ հետ պէտք է համարուրդես . վերջին անգամ թուղթը վերցրու եւ այս բանը իւր վրայդ էլ խաղաղութիւն տուած հրաժեշտի հանդիսաւոր ողջոյնդ կը լինի . շուտ արա՛ նստիր , տես Բարութիւնը համարութիւնը հատնում է :

— Այ , ոչ , հանգիստ եղէք , իմ հարեբութիւնն չէ հատնում , եթէ Սեթրակովը իւր այս բանը ես ինձ պարտուած չեմ համարի . բաւական է որ ներկայ եղողներդ բոլորիդ էլ սմբարիլ : Սեթրակովը արդէն յայտնի բախտաւոր է . եւ հաւանական է որ նա այսօր աւելի բախտաւոր լինի . որովհետեւ թուղթը կամակոր կնոջ պէս սիրում է նրանց , որոնք իրենց

նից փախչում են :

— Կրկնում եմ , շարունակեց Սեթրակովը , ես թուղթ չեմ անի ձեռքս , ներեցէք իւրիա ի վանդաւ վերջնապէս խօսք եմ տել :

— Բայց ո՛ւմ էր խօսք տել , որ չէք ուզում խօսքադրուծ լինել : Թղթի այնքան ջերմեանիդ երկրպագուն միմէ՞ կարող է , այդպէս , մի երկու օրուան մէջ փոխվել . արդեօք նշան վել է՞ք եւ ձեր նշանածը ձեզից խօսք է առել որ այլեւս թուղթ չը խաղա՞ք :

Վրա բերեց իւրիա ի վանդաւ մի քիչ յուզված :

— Այ , ոչ , չեմ նշանված աղջկայ հետ . խօսքը ինքս ինձ եմ տել . եւ իմ առջեւ է որ խոստմնազանց չեմ ուզում լինել :

— Լաւ , միջամտեց Բարութիւնը , քանի որ դու չես ուզում թղթի ձեռք տալ . թո՛ղ իւրիա ի վանդաւ ձեր բախտին թուղթ նշանակէ . եթէ տարվի , դուք կը վճարէք :

— Մեծ ուրախութեամբ կը համաձայնէի . եթէ արամադրիլի փոխու նենայի . դժբախտաւոր , թէ բարեբախտաւոր , այսօր ոչ փող ունիմ , եւ ոչ էլ պաշտօն : Ձեզ էլ պարտք չեմ

ուզում մնալ , եւ չեմ էլ ուզում որ իւրիա ի վանդաւ զօրաւորին կացութեան մէջ ընկնի . աւելի լաւ է թող Բարութիւնը այդ գուժարը վերցնի . քանի որ ձեր մէջ սիսկ անող չը կայ , նրա բանը խելու համար :

Սաղազողները իրարու երես նայեցին . մի քանի վայրկեան տիրեց խորին լուռութիւն , Բարութիւնը համարութիւնը հատել էր . նա ցնցվող մատներով սրտոյում էր խաղաղութեւրը , վերջապէս ասեց .

— Էն ինչպէս տեսում եմ հա՛մարձակվող չկայ . բանիկ ինձ է պատահանում , Լաւ թիւնը շարունակեց : Նիհար , դեղնած հիւրը մէջ ընկաւ :

— Բայց իրաւունք չունէք վերցնելու . մէկ անգամ էլ դեռ պէտք է թուղթ բաժանէք . շրջանը դեռ չը լրացաւ :

— Ետտ լաւ համաձայն եմ չոր կերպով պատասխանեց Բարութիւնը :

Միւս խաղաղողները բողբոջիին :

— Այ , ոչ Բարութիւն , բանը ձերն է . էլ թուղթ բաժանելու պէտքը չը կայ :

— Էն լաւ . քանի որ այդպէս է , փողերը վերցնում եմ :

Վերցնելով թղթադրամիկ ի կոյար , նա դարձաւ Սեթրակովին .

— Առ , ուր որ գնում ես հետդ տար այս փողերը , պէտքը կը գան . թէեւ մաքուր միջոցով չեն ձեռք բերված , բայց այնքան էլ անտարբեր չեն . որովհետեւ նրանք այստեղ հաւաքվել են մեծ յուզումներից եւ հոգեկան տանջանքներից յետոյ . իսկ ինչ դրամ որ ձեռք է բերվում յուզումով , սիսկով . նա միշտ լաւ դրամ է :

Բաքուի ամբողջ դրամը խաղի , բախտի խաղի դրամ է . մեր միջոցաւ տէրերը բոլորն էլ բախտի չնորհի են հարստացել . երկարատեւ անդու աշխատանքի ու խնիքի արդիւնք չեն այստեղի հարստութիւնները . իսկ հարստաներից դրամ պահանջվում չէ , Դէ շուտ արա վերցրու , ձեռքս յոգնեց , քեզ եմ ասում Սեթրակով , թէ չէ կայրեմ բոլորն էլ , Հէնց այս սեղանի վրա եւ խաղին վերջ կը տամ :

— Սեթրակովը վերցրեց . իւրիա ի վանդաւ ասպազ գիտում էր այդ տեսարանը :

(Շարունակելի)

ՌՈՒՍՈՅ ԿԱՔՈՒԹԻՒՆԸ

Անցեալ օր եւրոպական թերթերը հաղորդեցին որ Բեթերսպուրկի մէջ պիտի սկսին հրատարակուիլ երեք ազատական թերթեր որոնցմէ մին արմատական պիտի ըլլայ:

Այսօր ալ հեռադիւրները կը հաղորդեն որ ներքին գործոց նախարարին կարգադրութեամբ, գեմստօններուն բոլոր այն անդամները, որոնք իրենց ազատական ձգտումներուն համար աքսորուած էին ցաւազան տեղեր արտօնութիւն ընդունած են վերագառնալ իրեն տուները:

Ինչպէս կերելի Միւրակին լըջօրէն որոշած է Բլէզէին հակառակ ուղղութեամբ երթալ, և ի հարկէ աւելի մեծ ծառայութիւն պիտի մատուցանէ իր հայրենիքին, քան թէ Բլէզէները:

Իսկ եթէ պատերազմը կարծուածին չափ երկար տեւէ, այն ատեն ուս ժողովուրդը աւելի ազատութիւն պիտի վայելէ իր ներքին կեանքին մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Հաւասար գործակալութիւնը Աթինայէն կիմանայ թէ յոյն մակեդոնական զօլտնի կօմիտէն պաշտօնապէս կը հաղորդէ որ յունական հրոսախումբ մը խուժած է Մակեդոնիա հրոսպետ Ձէզան սպաննած է Բրէզօրանային քով երկու պուլկարներ, որոնք կը մեղադրուէին յոյներ սպաննելու մէջ: Հրոսախումբը թուրք զօրքերու առջեւը նահանջներ է: Ուրիշ յոյն հրոսախումբ մը, առաջնորդուելով Քտուտեսէն, ընդհարում ունեցեր է պուլկար հրոսախումբի մը հետ, որուն միջոցին վիրաւորուեր են 22 պուլկարներ և սպաննուած վեց: Յոյներէն ըսպաննուեր է երիտասարդ միայն:

— Սեպտ. 17ին ուս թուրք սահմանազխիւն վրայ ուս սահմանապահ զօրքը հրացան պարպեր է սահմանը անցնող քիւրտերու վրան և անոնցմէ երեքը ըսպաններ և մէկը վիրաւորուեր է: Շուտով թէ սուները և թէ քիւրտերը օգնութիւն կատանան և նոր ընդհարում տեղի կունենայ:

Երկու ուս զինուորներ կը վիրաւորուին իսկ 30 քիւրտեր և մէկ թուրք զինուոր կսպաննուի:

— Յունաց պատրիարքը սպանացեր է թուրքի մէջ գտնուած յունական բոլոր եկեղեցիները զոցել, եթէ թուրքիա զիջողութիւն ընէ ումէններուն:

— Ձուլցերիոյ թուրք գեպաւնը պահանջած է որ ժնէվէն արտաքսի երիտասարդ թուրքըը:

ժիշկ մը, որը երիտասարդ թուրքերու թերթերուն մէջ սպաննացեր է Սուլթանի սպաննել:

ՌՈՒՍՈՒ

Ներքին գործոց նախարար Միւրակին 60 տարի առջ Բրուսիա գաղթած ուս հնազանդ կոչուած ազանդաւորներուն արտօնութիւն տուած է վերագառնալ Ռուսիա և բնակութիւն հաստատել Օրէնպուրկ թաշկէնտ երկաթուղիին դիմին քովերը:

— Պատերազմական նախարարութիւնը հրամայեր է անմիջապէս վարչապետին բաղձութիւ պահեստի բժիշկներ զրկել Մանչուրիա:

— Նօվորոսիսկէն Բեթերսպուրկ կը հեռագրեն թէ Արշիթէթի Գարլինսկի, որուն տան մէջ սպաննուած գանուեր է թուրքական հրապատուր, յայտարարներ է որ ինք է բարկութեան մէջ սպաննուող հրապատուր:

— Կապսուի որ եկող շարժում Բալթիկեան նաւատորմի գանուերական ծովով Մայրաքաղաք Արեւելք պիտի մեկնի:

— Կեղարուեստի ճեմարանի առաջին ժողովին մէջ պիտի խորհրդակցուի ամբողջ Մաքարովին հետ ընկղմած նշանաւոր նկարիչ Վերեշչակին յիշատակը յաւերժացնելու խնդրոյն մասին:

ՌՈՒՍ—ՃԱՔՈՒԱԿԱՆ ՊԱՏԵՐԱՋՄ

Բէօթէրի գործակալութիւնը Թօքիօէն կիմանայ որ Մարքիզ Օնաման հեռագրած է թէ պատերազմական գործակալութիւնները յաջող ընթացք ունին:

Յիւրաք որ ուս զօրաբաժինը որ գէպի Լեանտանկ ուղղուած էր ճարտարներուն կողմէն առանց նաձրուած է:

— Քուրքիւն ամբողջ 11 ժամ կուած է մեծաքանակ ուս զօրքերու հետ և պահպանուած իր դիւքերը:

— Սեպ. 28ի ուսական յարձակումը ևտ մղուած է. ուսները կը կեդրոնանան Պինչանխուի քովերը:

— Լոնտօնէն կը հաղորդեն 30 սեպտեմբերին, որ ըստ Բէօթէրի տուած տեղեկութեան ճարտարները կատարի կուրէ մը վերջը, Բէնզիկայի քով ուսները կայնեցուցած են Օքուի բանակին ալ թեւը միացած նոսրու բանակին ձախ թեւին հետ ետ մղուեր են ուսական յարձակումը վուրբուրձուի քովը: Օքուին կեդրոնը ուսները հարածեր է Թաթուկչանէն, իսկ ձախ թեւը ուսները հարածեր է Որպետն շուտանի մտ և տուղանցեր գէպի թաթչեարուն:

Բեթերսպուրկէն Յոյն թերթերը կը հաղորդեն թէ պատերազմական հեղինակուեր անձ մը յայտարարած է որ Բօթի Արթուրին ազատուցը անկարելի է. որովհետեւ կուրաբաթքինի օգնելու համար զրկուած զօրքերը մաս մաս կը հասնին, իսկ Լինբելիշի զօրքերը անհրաժեշտ են կախալինը պաշտպանելու համար:

— Գոցի այդ ճարտարներն ալ զգալի օգնութիւն ստացած են: — ԿՏԷԼԸ Թէլէգր. Զիֆուէն կիմանայ որ ուս մը ընկնելով Նիսուէին բնակարանին քով զայն ստիպած է տեղափոխուիլ քաղաքին մտ, Բօթի Արթուրի մէջ շատ երեսններ կը մեկնին: Թուները 11 ճարտար գերիներ ապստարձակուած են, որովհետեւ առանց ատոնց ալ 4000 քաղաքացիներ պարտաւոր են կերակրել:

— Սեպ. 30ին Բէօթէրի գործակալութիւնը Շանխայէն կիմանայ որ ամսոյս 18ի Բօթի Արթուրին նաւատորմի զինուորական փորձը յաջողուած չէ, ճարտարներու ամբողջութիւններէն եղած ուժակոծումին պատճառով:

— Լոնտօնէն կը հաղորդեն որ Թօքիօի և Քօթէի նահանգներուն մէջ մեծ դժգոհութիւն կայ թան գուլթեան և զօրքի պակասութեան պատճառով:

— Պահեստի զօրքերը կը փախին և բժիշկ մը որ զինուոր կուրաւորներուն համար հրանդուութեան կեղծ վկայականներ կուտար, հրացանի բռնուեր է:

— Ամէն տեղ լրտեսութեան կը վախցուի: Ազգաբնակչութեան դժգոհութիւնը վախ կազդէ կառավարութեան:

— 19 Ապտեմբեր. Լոնտօն կը հաղորդեն որ ճարտարները 12 հազար նոր զինուոր և 600 թնդանօթ օդուութիւն ստացեր են:

— Երկու զօրաբանակներուն թիւը 600 հազարի կը հասնի, 7800 թնդանօթներ կան:

— Բէօթէրի գործակալութիւնը Թօքիօէն հոգեմտեբար 1ին կը հեռագրէ թէ Մարքիզ Օյամա կիմանցնէ որ գոհ է ճարտարական զօրաբանակի ձախ թեւի կենտրոնէն. ձախ թեւը կատարար կը կուրի և կուզէ ուսական ձախ թեւին ետեւը տնցնիլ:

Միջին զօրաբանակը ամսիս 28ին գիշերը գրուեր է երկու ամրոցային թնդանօթներ, 8 սայլ զինուորական պաշարով. մէկերալ Մայր Մուրին վիրաւորուած է, իսկ գնդապետ մը սպաննուած:

— Աթթէրի գործակալութիւնը կը հաղորդէ որ Օքու ուսներէն խլած է 30 թնդանօթ:

— Ամենանոր տեղեկութիւններու համաձայն ճարտարները շարունակ յաղթութեան մէջ են:

— Թօքիօէն գերմանական թերթերը կը հաղորդեն թէ պատերազմական հեղինակուեր անձ մը յայտարարած է որ Բօթի Արթուրին ազատուցը անկարելի է:

Թերթերը կը հաղորդեն թէ երեք օրուան յարձակման պատճառով Բօթի Արթուր քաղաքին մեծ մասը կրակի մէջ է: Ծարձակները երկու նոր ամբողջութիւններ գրուած են:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

—)0(—  
Այնքանագրիւս. — Տ. Կ. Փ.—  
Ձեր ուղարկած 30 Քրանկի շէքը ստացուած է, ինչպէս և 15 Քրանքը: Ձեր խնդրած թերթին համարը նշանակեցէք որ կարելի ըլլայ գտնալ:  
Ձեր տուած հասցէին թերթը կ'ընդհանրէ:

ԲԱՏՈՒՄ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՎԱՐՃԱՐԱՆԻ

Հակառակ մեր ջանքերուն չը կարողացանք մեր խոստացած մասնակիւն սեպտեմբեր 15ին վարձարանը բանալ:

Ներկայիս կուրանք յայտարարել թէ նախնական պատրաստութիւնները վերջացած և ուսուցչական խումբը կազմուած վարձարանս կը բացուի յապիկայ երկուշաբթի հոկտեմբեր 10ին ի նուպրա կէպիէ Պատրան կը յուսանք թէ ծնողներ պիտի փութան այս հիմնարկութեան օգտուիլ իրենց զաւակներուն լաւագոյն կրթութիւն մը և հիմնաւոր մտքի պաշար մը տալու համար, որուն յաջողութեան համար ինչպէս արդէն ըսած էինք մեր յայտագրի մէջ, ոչ մի աշխատութիւն և գիտական մանկավարժական ջանք պիտի խնայուի:

Աշակերտներու արձանագրութեան համար կարելի է դիմել վարձարանիս տեսչութեան այս օրուներ սկսած ամէն օր ժամ 10-12 և 2-5 բացի շաբաթ և կիրակի օրերէ:

Պիշիթիկ աշակերտները վարձարանս կ'ընդունուին արձանագրուելէ երեք օր յետոյ, որպէս զի կարելի ըլլայ այդ մասնակամիջոցի մէջ անկողնի եւ այլնի պատրաստութիւն կատարել:

Տեսուչ Համագային Վարձարանի Յ. Աստրեան  
Հոկտ. 5 1904  
Գանիի

ОТГОВОРНИКЪ  
Мурадъ-Браносянъ

Печатница „Взаимность“ Варна